

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Մ.ԼՈՍՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՄՊՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ. ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉՄԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույն Կանոնակարգը սահմանում է Մ.Լոմոնոսովի անվան ՄՊՀ Մասնաճյուղին կից Ա.Հ. Երիցյանի անվան դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) աշակերտների ուսման վարձի լրիվ կամ մասնակի զեղչման կարգը:
- 1.2 Դպրոցի հիմնադիրը, առաջնորդվելով «Կրթության մասին» ՀՀ Օրենքով, կիրառում է ուսման վարձի զեղչ՝ սովորողների վարձավճարներից գոյացած բյուջեի տասը տոկոսի չափով:
- 1.3 Ուսման վարձի զեղչեր կարող են սահմանվել.
  - 1.3.1. ընդունելության քննությունների (թեստավորման) արդյունքների,
  - 1.3.2. սոցիալական խմբի,
  - 1.3.3. անապահովության գնահատականի,
  - 1.3.4. առաջադիմության,
  - 1.3.5. վարկանիշային աղյուսակում զբաղեցրած տեղի,
  - 1.3.6. հիմնադրի հայեցողությամբ՝ այլ չափանիշների հիման վրա:
- 1.4 Ուսման վարձի զեղչը տրամադրվում է տնօրենի հրամանով՝ հիմնադրի որոշման հիման վրա:
- 1.5 Աշակերտի հեռացման (ազատման) և վերականգնման դեպքում (անկախ հիմքից) նախկինում տրամադրված զեղչը չի վերականգնվում:

### II. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ԿԱՍ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 2.1 Ուսման վարձի լրիվ զեղչ /անվճար ուսուցում/ կարող է տրամադրվել.
  - 2.1.1 Ընդունելության թեստավորման արդյունքում **95-100** միավոր ստացած աշակերտներին:
  - 2.1.2 Վարկանիշային աղյուսակում ընդգծված առաջատար դիրք գրավող սովորողներին:
- 2.2 Տվյալ ուսումնական կիսամյակին նախորդող երկու կիսամյակների ընթացքում գերազանց առաջադիմություն ցուցաբերած սովորողին տրամադրվում է 25 % զեղչ:
- 2.3 Բավարար առաջադիմություն և պատշաճ վարքագիծ<sup>1</sup> ունենալու դեպքում ուսման վարձի մասնակի զեղչ տրամադրվում է հետևյալ սոցիալական խմբերում ընդգրկված անձանց.
  - 2.3.1 Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին<sup>2</sup> - **50%**

<sup>1</sup> Սույն Կանոնակարգի իմաստով աշակերտի պատշաճ վարքագիծը դպրոցի ներքին կանոնների պահպանումն է:

<sup>2</sup> Առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում 18 տարին չըրացած այն երեխան, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների եւ շահերի պաշտպանությունից, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

- 2.3.2 Միակողմանի ծնողագուրկ /միաձնող/ երեխաներին - **25%**
- 2.3.3 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող երեխաներին - **25%**
- 2.4** Բավարար առաջադիմություն և պատշաճ վարքագիծ ունենալու դեպքում ուսման վարձի **մասնակի** զեղչ տրամադրվում է հետևյալ կարգավիճակ ունեցող անձանց.
- 2.4.1 Սոցիալապես անապահով (պետական սոցիալական ծառայությունների կողմից կիրառվող ընտանիքների ապահովության գնահատման համակարգում հաշվառված, անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) սովորողներին - **10%**
- 2.4.2 Մ.Լոմոնոսովի անվան ՄՊՀ Մասնաճյուղում և դրան կից Ա.Ն. Երիցյանի անվան դպրոցում սովորող երկու և ավելի երեխա ունեցող ընտանիքի աշակերտներին (սկսած 2-րդ աշակերտից) – **25%**
- 2.4.3 Մ.Լոմոնոսովի անվան ՄՊՀ Մասնաճյուղի և դրան կից Ա.Ն. Երիցյանի անվան դպրոցի հիմնական աշխատողների երեխաներին - **25%**
- 2.4.4 Առանձնահատուկ դեպքերում, հիմնադրի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող սովորողներին:
- 2.5** Վարկանիշային աղյուսակի վերին հորիզոնականներում գտնվող աշակերտներին հիմնադրի որոշմամբ կարող են տրամադրվել **տարբեր չափի զեղչեր**:
- 2.6** Սույն Կանոնակարգի 2.1.1 կետում սահմանված կարգով ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի զեղչից աշակերտները կարող են օգտվել միայն ուսումնառության առաջին կիսամյակում: 2.1.2 և 2.1.5 հիմքով ուսման վարձի զեղչեր կարող են սահմանվել մեկ կիսամյակի համար՝ սկսած ուսումնառության երկրորդ կիսամյակից: 2.3.1 և 2.3.2 հիմքերով զեղչը սահմանվում է ուսումնառության ողջ ժամանակահատվածի, իսկ 2.3.3, 2.4.1-2.4.3 հիմքերով՝ մեկ ուսումնական տարվա համար:
- 2.7** Ուսման վարձի զեղչ տրամադրվում է Ծնողի (Խնամակալի) դիմումի և զեղչման հիմք հանդիսացող փաստաթղթերի առկայության դեպքում:

### III. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉԸ ԶԵՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 3.1.** Աշակերտի ուսման վարձի զեղչը չեղարկվում է, եթե.
- 3.1.1 Աշակերտը խախտել է դպրոցի ներքին կանոնները կամ հասարակական կարգը, որի պատճառով տնօրենի հրամանով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:
- 3.1.2 Վերացել են զեղչման հիմք հանդիսացած հանգամանքները:
- 3.2** Զեղչը չեղարկվում է տնօրենի հրամանով, ուսումնական մասի վարիչի զեկուցագրի հիման վրա 3.1 կետում նշված հանգամանքների առաջանալու պահից:
- 3.3** Ուսումնական մասի վարիչը զեղչը չեղարկելու մասին գրավոր իրազեկում է աշակերտի Ծնողին (Խնամակալին):
- 3.4.** Զեղչը չեղարկելու մասին Հրամանի քաղվածքը կցվում է աշակերտի անձնական գործին: